«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում

Դաստիարակ՝ Քյուրքչյան Լուսինե

Մանկապարտեզ՝ Գյումրու «Անուլիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գլուխ 1. Հետազոտական թեմայի վերնագիրն է՝ էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում……4

Գլուխ 2. Հետազոտության ընթացք……6

Եզրակացություն……9

Գրականության ցանկ……10

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Էքսկուրսիա» բառը(excursio) լատիներեն նշանակում է կոլեկտիվ ուղևորություն կամ արշավ տեսարժան վայրեր՝ գիտական, կրթական նպատակով: Էքսկուրսիան լայնորեն տարածվել է 14-րդ դարի սկզբին ինչպես արտասահմանում, այնպես էլ Հայաստանում: Ուսումնական էքսկուրսիաները ուսուցման կազմակերպման լավագույն ձևերից են: Առանձին մանկավարժ գիտնականներ էքսկուրսիան համարում են մեթոդ: Մենք գիտենք,որ էքսկուրսիայի ընթացքում կիրառվում են ուսուցման բացատրական-ցուցադրական, զրույցի, գործնական և այլ մեթոդներ: Հետևաբար ուսումնական էքսկուրսիան ուսուցման կազմակերպման ձև է: Ուսումնական էքսկուրսիաները հնարավորություն են ընձեռում աշակերտներին երևույթները, առարկաները, հուշարձանները տեսնել բնական վիճակում:

Անդրադառնալով մեր թեմային՝ նշեմ, որ մեր հետազոտական թեմայի վերնագիրն է՝ էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում:

Աշխատանքի արդիականությունը. էքսկուրսիաները և մշակութային այցերը բոլոր ժամանակներում էլ արդիական են, դրանք դասապրոցեսի բաղկացուցիչ մաս են կազմում: Երեխանները վերացարկված երևույթները իրականում կարողանում են տեսնել էքսկուրսիաների ժամանակ:

Աշխատանքի **նպատակն** է ներկայացնել մշակութային այցերի, էքսկուրսիաների դերը սաների զարգացման գործում, և մշակութային այցերը ի՞նչ ազդեցություն են ունենում սաների հուզակամային զարգացման ընթացքում:

Վարկած. Ես ենթադրում եմ, որ Էքսկուրսիոն ծրագրերը պետք է ավելի շատ լինեն մեր ուսուցման գործընթացում, որ սաները հաղորդակից լինեն մեր մշակույթին, արժեքներին, պատմությանը:

ԳԼՈՒԽ 1

ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

էքսկուրսիաները զարգացնում են սաների բարոյական, գեղագիտական հատկանիշները: Էքսկուրսիաների նպատակն է զինել երեխաներին այնպիսի գործնական գիտելիքներով և ունակություններով, որոնք կձևավորեն արժեքային համակարգը (սեր հայրենիքի, նրա պատմության, մշակույթի նկատմամբ), նաև հետագայում կնպաստեն ինքնուրույն դատողություններ կատարելուն: Էքսկուրսիաների տարբեր տիպերը հնարավորություն են տալիս ուսուցանվող թեմայի տեսականը զուգակցել գործնականին, անցած նյութն ավելի խոր ու բազմակողմանի մատուցել սաներին:

Սաներին էքսկուրսիա տանելով՝ կարող ենք ծանոթացնել մշակութային բարձր արժեքներին : Տարբեր խմբերում ՝ ելնելով երեխաների տարիքային առանձնահատկություններից, տարբեր են էքսկուրսիաների վայրերը: Էքսկուրսիաներ կարող ենք նաև կազմակերպել մանակապարտեզի, նախակրթարանի շրջակայքում՝ երեխաներին ծանոթացնելով շրջակա միջավայրին:

Էքսկուրսիաները կատարում են այն նույն գործառույթները, ինչ որ դասերը՝ ուսուցանող, դաստիարակող և զարգացնող: էքսկուրսիան դիտվում է որպես ուսուցման կազմակերպման մի յուրահատուկ ձև, որպես աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման միջոց: Գիտելիքի հաղորդումը կարելի է կատարել դաս-էքսկուրսիաների միջոցով՝ նկատի ունենալով, որ այդ ձևով յուրացումն ավելի կայուն ու խորն է լինում, իսկ դասն ավելի աշխույժ ու հետաքրքիր է անցնում[1]:

[1] Ա. Տեր-Գրիգորյան ,Գործնական աշխատանքները բացատրական ընթերցանության դասերին, Երևան 1963 թ.

Էքսկուրսիոն ծրագրերը, մշակութային այցերը զարգացնում են երեխաների աշխարհաճանաչումը, աշխարհընկալումը, արժեքային համակարգը:

Էքսկուրսիան դաստիարակին հնարավորություն է տալիս կոնկրետ ու վառ փաստերի վրա երեխաներին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների ու երևույթների միջև եղած կապերը, պատճառի ու հետևանքի փոխկապվածությունը և մարդու վերաստեղծող ու վերաշինող ուժը[2]:

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև երեխաների խոսքի զարգացման համար[3]:

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև դաստիարակչական տեսակետից: Դրանք երեխայի մեջ զարգացնում են ուշադրություն ու դիտողունակություն, մշակում են գիտակցական կարգապահություն ու կազմակերպվածություն՝ մանկապարտեզից դուրս իրենց պահելու դաստիարակի կարգադրությունները ժամանակին, ճիշտ ու անթերի կատարելու ունակություն:

Սաներին էքսկուրսիա տանելով տիկնիկային թատրոն, կրկես, գրադարան՝ նրանց ծանոթացնում ենք մշակույթին: Այն նրանց մեջ զարգացնում է գեղագիտական ճաշակ, մշակույթի հանդեպ հետաքրքրություն է առաջացնում:

Էքսկուրսիայի ընթացքում ձևավորվում են շատ բարոյական նորմեր՝ ընկերասիրություն, կոլեկտիվիզմ, փոխօգնություն և այլն: Էքսկուրսիայի ժամանակ երեխաները ձեռք են բերում բնավորության այնպիսի գծեր ինչպիսիք են՝ հաստատակամությունը, համառությունը, դժվարությունները հաղթահարելու կամքը:

Էքսկուրսիայից ստացած տպավորությունները ավելի անմիջական են և պահպանվում են ավելի երկար: Եվ պատահական չէ, որ ասում են լավ է մեկ անգամ տեսնել, քան տասն անգամ լսել:

---

[2] https://old-lib.armedu.am/resource/23408

[3] Գյուլամիրյան Ջ. Հ.,Խոսքի զարգացում,Զանգակ -97,Ե.,2014., 288էջ:

ԳԼՈՒԽ 2

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Բովանդակությունը

Ուսումնասիրելով էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում թեման՝ ներկայացնում եմ իմ կատարած հետազոտական աշխատանքը, թե ինչպիսի էքսկուրսիոն ծրագիր եմ անցկացրել՝ հիմքում դնելով մեր մշակույթը:

Իմ հետազոտությունը անցկացրել եմ միջին խմբի երեխաների հետ, որոնց հետ այցելել ենք մարզային գրադարան:

Մեր այցը մարզային գրադարան կազմակերպել էինք դեկտեմբերի 16-ին: Մեզ հետ եկել էին՝ դաստիարակներ Լիդա Առաքելյանը, երաժշտական ղեկավար Արմենուհի Ներսիսյանը:

Երեխանները ջերմ ընդունելության արժանացան, ինչն էլ ոգևորում էր նրանց:

Երեխանների հետ շրջել ենք գրադարանի տարացքում: Այդ շրջայցը երեխանների համար անցկացվեց շատ հետաքրքիր և բովանդակալից:

Երեխաները տեսան բազմազան գրքեր, ինչպես նաև, դիտելով մի շարք դիմանկարներ՝ ճանաչեցին մեր սիրված հեքիաթների հեղինակներին: Երեխանները հաճույքով լսում և հետաքրքրությամբ նայում էին պատկերազարդ նկարներին և դրանց մասին պատմվող պատմություններին:

Գրադարանում երեխաներին հատկապես դուր էր եկել Հովհաննես Թումանյանի հեքիաթների անկյունը:

Համպատրաստից երեխաների հետ բեմականացրեցինք Հովհաննես Թումանյանի «Ծիտը» հեքիաթը, որը հաճելի անակնկալ էր գրադարանի աշխատակիցների համար, այս ամենը համեմվեց մեր երաժշտական ղեկավարի նվագած հնչյուններով:

Երեխաները կատարեցին ուսումնական բովանդակալից շրջայց գրադարանի սրահում: Ծանոթացան շատ հետաքրքիր գրքերի , որոնց հեղինակներից շատերը նրանց ծանոթ էին:

Երեխաները հաճույքով լսում էին գրադարանավարի պատմած պատմությունները, մեծ հետաքրքրությամբ նայում հազարավոր գրքերի:

Հետաքրքիր էր նաև այն, որ երեխաները պատկերազարդ նկարներին նայելով կարողանում էին գուշակել, թե որ հեքիաթն է:

Էքսկուրսիայի վերջում փոքրիկները շատ ոգևորող խոսքեր լսեցին իրենց մասին գրադարանի աշխատակիցների կողմից, քանի որ իրենց շատ լավ դրսևորեցին, ինչը նաև գովաբանվեց իմ կողմից: Բոլորը շատ ոգևորված էին և ցանկանում էին մեկ անգամ ևս այցելել գրադարան:

Նպատակը

Այս այցի նպատակն էր ընդլայնել զգացմունքների աշխարհը, նրանց ծանոթացնել այն ժառանգությանը, որը ստացել ենք մեր նախնիներից և, որ նրանք են այդ ժառանգության կրողները: Նաև ցանկանում էինք գեղագիտական ճաշակ սերմանել երեխաների մեջ:

Դաստիարակների կարծիքը

Այցը շատ լավ էր կազմակերպված, բովանդակալից էր: Համապատասխանում էր էքսկուրսիայի վայրը երեխաների տարիքային առանձնահատկություններին: Այցը ուսուցողական էր երեխաների համար, ինչպես նաև հետաքրքիր:

Այս այցը զարգացնում է երեխաների տեսողական, խոսքային ունակությունները:

Կոլեկտիվ աշխատանքը նպաստեց երեխաների թիմայնի աշխատելու կարողությունների ամրապնդմանը և զարգացմանը:

Երեխաները իրենց զգում էին շատ լավ և ոգևորված էին: Ցանկություն էին հայտնում ևս մեկ անագմ այցելել գրադարան: Մի մասն էլ ցանկություն էին հայտնում մայրիկների հետ գալ գիրք վերցնել, և խնդրել ծնողներին կամ տատիկ-պապապիկներին իրենց համար այդ գիրքը ընթերցեն, այս ամենը վառ ապացույցն է այն բանի, որ ճիշտ էր ընտրված և՛ վայրը և՛ խումբը:

Կարող ենք ասել, որ դաս-էքսկուրսիան ստացված էր և համահունչ մեր երեխաներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ թեման ուսումնասիրելով՝ եկա այն եզրահանգմանը, որ էքսկուրսիաները, մշակութային այնցերը միայն դրական ազդեցություն են թողնում սաների կյանքում:

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև դաստիարակչական տեսակետից: Դրանք երեխայի մեջ զարգացնում են ուշադրություն ու դիտողունակություն, մշակում են գիտակցական կարգապահություն ու կազմակերպվածություն՝ մանկապարտեզից դուրս իրենց պահելու դաստիարակի կարգադությունները ժամանակին, ճիշտ ու անթերի կատարելու ունակություն:

Էքսկուրսիաներըհնարավորություն են տալիս ճանաչելու մեր ազգային արժեքները, բնությունն ու միջավայրը, որտեղ ապրում ենք:

Հետազոտական աշխատանքի ավարտին բացահայտեցի, որ երեխանները էքսկուրսիոն ծրագրերը ավելի շատ են սիրում և ավելի շատ են ներգրավվում այդ պրոցեսին:

Պարապմունքի ընթացքում հասա այն արդյունքին, որին ցանկանում էի հասնել:

Այս թեմայի շրջանակում կցանկանայի, որ դաստիարակները իրենց հետագա աշխատանքում շեշտը դնեին մշակութային այցերի վրա: Երեխանների համար ավելի շատ էքսկուրսիաններ կազմակերպեին: Տարբեր տարիքային խմբերի դեպքում տարբեր լինեին մոտեցումները և էքսկուրսիոն ծրագիրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Տեր-Գրիգորյան ,Գործնական աշխատանքները բացատրական ընթերցանության դասերին, Երևան 1963 թ.
2. Գյուլամիրյան Ջ. Հ.,Խոսքի զարգացում,Զանգակ -97,Ե.,2014.,288էջ:
3. https://old-lib.armedu.am/resource/23408